

Երեւանի մամուլի ակումբի՝ 1997թ. ֆինանսական գործունեության

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ*

1997թ. հունվարի 1-ի դրությամբ Երեւանի մամուլի ակումբի տրամադրության տակ նախորդ տարվանից մնացել էր 2.403.127 դրամ 26 լումա: Այդ թվում՝ 126.805 դրամ 94 լումա՝ գոյացել էր մուտքի ու տարեկան անդամավճարներից եւ անձնական նվիրատվություններից, ինչպէս նաեւ 2.276.321 դրամ 32 լումա՝ 1996-ին «Եւրասիա» հիմնադրամի տված շնորհագումարից:

1997-ին Երեւանի մամուլի ակումբի հաշվին մուտք են եղել. 223.000 դրամ՝ մուտքի եւ տարեկան անդամավճարներ, 16.030 դրամ՝ անձնական նվիրատվություններ, 5.717.250 դրամ՝ ԱՄՆ կառավարության շնորհագումարը (ԱՄՆ տեղեկատվական գործակալության երեւանյան գրասենյակի միջոցով), 15.169.533 դրամ 92 լումա՝ «Եւրասիա» հիմնադրամի շնորհագումարը:

1997-ին կատարվել են հետեւյալ ծախսերը.

1. Անձնակազմի աշխատավարձը եւ հրապարակումների համար հոնորարները - 6.771.598 դրամ 37 լումա
2. ԵՄԱ տեղեկագրի հրատարակման տեխնիկական ծառայությունների վարձատրություն տեղեկագրի շարվածք, էջադրում, դիզայն, սրբագրում) - 2.602.776 դրամ 97 լումա
3. Թղթի եւ տեղեկափոխի բազմացման ծախսեր - 2.773.516 դրամ, 80 լումա
4. Աշխատավարձի եւ հոնորարի հարկեր - 4.578.201 դրամ, 92 լումա
5. Հիմնական միջոցների հարկեր - 8.645 դրամ
6. Հեռահաղորդակցական ծախսեր - 693.124 դրամ, 17 լումա
7. Փոստային ծախսեր - 21.275 դրամ
8. Տրանսպորտային ծախսեր - 181.000 դրամ
9. Պարբերականների ձեռքբերում - 72.185 դրամ
10. Ներկայացուցչական եւ հյուրընկալության ծախսեր (հյուրերի հրավիրում եւ ընդունում, հանդիպումների կազմակերպում) - 106.400 դրամ
11. Վարչական ծախսեր (գրասենյակային, գրենական պիտույքներ եւ այլն) - 10.000 դրամ
12. Բանկային ծառայությունների վճար - 79.690 դրամ 30 լումա
13. Մուտքի անդամավճարի վերադարձ (ԵՄԱ վարչության որոշմամբ) ԵՄԱ-ից դուրս եկած անդամին - 5.000 դրամ

Ընդամենը. Երեւանի մամուլի ակումբի ծախսերը 1997-ին կազմել են 17.903.413 դրամ 13 լումա: 1998թ. հունվարի 1-ի դրությամբ Երեւանի մամուլի ակումբի տրամադրության տակ մնացել է 5.625.527 դրամ 95 լումա:

** Սույն հաշվետվությունն ընդգրկում է միայն այն գործունեությունը, որտեղ ֆինանսները Երեւանի մամուլի ակումբն է տնօրինել:*